



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 սեպտեմբերի 2018 թվականի թիվ 72-Ա

ք. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԶԱՏՎԱԾՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՂ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ մասերով և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *n p n շ'ե ց*.

Հաստատել «Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Հավելված  
Հաստատված է  
Հեռուստատեսության և  
ռադիոյի հանձնաժողովի  
2018 թվականի սեպտեմբերի 4-ի  
թիվ 72-Ա որոշմամբ

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆԴՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԶԱՏՎԱԾՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԵՌՈՒՍՏԱԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՒՐԻՈՐԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ԸՆԴՈՒՅՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՆԱԶԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Սույնով սահմանվում է Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը:
2. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Ընկերությունների հեռարձակած ծրագրերի ՀՀ ընտրական օրենսդրությանը համապատասխանության մշտադիտարկումն իրականացնում է.
  - Հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) անմիջական դիտարկման արդյունքների.
  - գրանցամատյանների և Ընկերություններից ստացված տեղեկատվության.
  - ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության.
  - Ընկերությունների կողմից ՀՀ ընտրական օրենսդրության խախտումների մասին լրատվամիջոցների հրապարակումների.
  - պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների Հանձնաժողով ներկայացրած կամ հրապարակած տեղեկատվության ուսումնասիրության հիման վրա:

3. Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամի մշտադիտարկումն իրականացվում է հրապարակված վճարովի եթերաժամանակի սակագնի սահմանման և եթերաժամանակի տրամադրման կարգի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի պահանջներին համապատասխանության ուսումնասիրմամբ: Դիտարկողը գնահատում է՝

- վճարովի եթերաժամի սակագնի և հայտարարման ժամկետի օրենքի պահանջներին համապատասխանությունը.
- նախընտրական քարոզչության ընթացքում սակագնի անփոփոխությունը.
- տրամադրվող եթերաժամանակի և դրա հեռարձակման ժամի համապատասխանությունը ոչ խտրական սկզբունքին.
- ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ներկայացրած նյութի հեռարձակելը մերժելու հիմքերի իրավաչափությունը (պատշաճ հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը):

4. Ընկերությունների կողմից հեռարձակված հեռուստառադիոհաղորդումները ուսումնասիրելիս, բացառությամբ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի, դիտարկողը գնահատում է՝

- ընտրությունները լուսաբանողի, հեռուստառադիոհաղորդումը վարողի, եթերում հանդես եկող Ընկերության աշխատակցի ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակում ընդգրկված որպես թեկնածու գրանցված լինելու, ինչպես նաև աշխատանքային կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր ունեցող անձանց հանգամանքը.
- լրատվական թողարկումներում և հասարակական-քաղաքական հաղորդումներում ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանումը գնահատականներից զերծ և անկողմնակալ լինելու հանգամանքը, լուսաբանման հավասարության և ոչ խտրական սկզբունքի պահպանումը.
- Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի պահանջների, պաշտոնական և այլ գործունեության լուսաբանման տարանջատվածությունը.

- ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքներին Ընկերության հեռարձակած հաղորդումներին և հաղորդաշարերին մասնակցության հավասար հնարավորություն ընձեռելու հանգամանքը.
- ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ հաղորդումներում և հաղորդաշարերում լրագրողի, հեռուստատաղիոհաղորդումը վարողի, էթերում հանդես եկող Ընկերության աշխատակցի անկողմնակալ լինելու հանգամանքը.
- գեղարվեստական, փաստավավերագրական, անիմացիոն ֆիլմերում, տեսահոլովակներում, ձայնագրություններում, առևտրային գովազդում, Ընկերության այնպիսի հաղորդումներում, որոնք նվիրված չեն ընտրությունների լուսաբանմանը, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կամ նրանց ներկայացուցիչ չհանդիսացող անձի կողմից, այդ թվում՝ նաև ինտերակտիվ եղանակով, նախընտրական քարոզչություն իրականացնելու հանգամանքի առկայությունը (ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գործունեության, քաղաքական և (կամ) նախընտրական ծրագրերի հիշատակելը, ներկայացնելը, գնահատական հնչեցնելը, համեմատություն իրականացնելը, ինչպես նաև կողմ կամ դեմ քվեարկելու կոչով հանդես գալը), ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների խորհրդանիշների կարգախոսների առկայությունը.
- ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակման համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի պահանջներին.
- քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն Ընկերություններին ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակելու հանգամանքի պահպանումը.
- քվեարկության օրը և դրան նախորդող օրը քարոզչական նյութի՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական քարոզչության իրականացման առկայության հանգամանքը:

5. Նախընտրական քարոզչության ընթացքում և դրա ավարտից հետո հաշվարկվում են՝

- նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից *յուրաքանչյուրին առանձին* Ընկերությունների կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը, այդ Ընկերության հաղորդումներին նրանց մասնակցության, ինչպես նաև նրանց նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման տևողությունը.

- նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին *առանձին* Ընկերության կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված *ընդհանուր* եթերաժամանակը, Ընկերության հաղորդումներին նրանց մասնակցության, ինչպես նաև նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման *ընդհանուր* տևողությունը.

- նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից *յուրաքանչյուրին բոլոր* Ընկերությունների կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը, հաղորդումներին մասնակցության, ինչպես նաև նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման *ընդհանուր* տևողությունը.

- նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին *բոլոր* Ընկերությունների կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված *ընդհանուր* եթերաժամանակը, հաղորդումներին մասնակցության, ինչպես նաև նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման *ընդհանուր* տևողությունը: